

ԱՅԼԵՒԱՅԼՔ

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՕՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՆ

(սլաւոնական տկարակ)

I.

Ն Ե Ր Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Երեւանի Սլաւոնական փողոցում, ընտրեցաւ—բանաստեղծ Վահան Տէրեանի անուն նւիրած Թաղամասում, կանգնած է Խորհրդային Հայաստանի Պետական Կոնսերւատորիան:

Սեւ—բարաշէն, երկայրկանի փողոցի մի շինութիւն է դա, որ իր կառուցւածքով հանդիսանում է Հայաստանի կուլտուրական վերածնութեան առաջնակարգ և խոշոր նաճուցիկներից մէկը:

Չորս տարի առաջ գոյութիւն չունէր գեղարեստի այդ տաճարը: Նրա ծագման պատմութիւնը բղիւսում է դարերի խորքից: Մեզանից միայն տասնը և հինգ դար առաջ, հայոց զրականութեան ոսկեշրջանում, Հայաստանի վանքերում ակիզք են առնում բազմաթիւ երաժշտանոցներ, որոնք լցնում են ամբողջ երկիրն անմահ երաժիշտներով:

Ի՞նչ էին սակայն այդ հիմնարկները: Դրանք վանական ողով կազմակերպւած երաժշտանոցներ էին, որոնք հեռու էին բուն ժողովրդից, մասսայից և կազմում էին մի շատ փոքրաթիւ դասակարգի, զիտաւորապէս եկեղեցականութեան սեփականութիւնը: Այդ կենտրոններում առհասարակ հոգեւորական երաժշտութիւնն էր մշակւում, որոշ և ուրոյն ծրագրով:

Այդպէս էր պատկերը եօթնորդ դարում, արարական տիրապետութեան պատմաշրջանում: Արշաւանդների, ատրկութեան այդ շրջանում երաժշտանոցներն առանձին փայլ են ստանում միմիայն վանքերում: Այդ դրութիւնը շարունակւում է Թաթարական իշխանութեան ժամանակ: Նոյնը և միջնադարեան շրջանում:

Միայն տասնը և հինգ դար յետոյ կառուցւում է ամենաառաջին աշխարհիկ երաժշտանոցը, բայց այս անգամ ոչ թէ հոգեւորականութեան, այլ և Խորհրդային Հայաստանի ամենաջերմ աշակցութեամբ:

Մեր կուլտուրական—գեղարեստական պատմութիւնը շատ քիչ ունի այնպիսի խոշոր երևոյթ, որպիսին մենք այսօր տեսնում ենք: Այդ երևոյթը բղիւսում է ժամանակի պահանջներից, աշխատաւոր ժողովրդի զարգացման պահանջներից: Բայց թողնենք պատմական այդ հանգամանքները և տեսնենք, թէ ի՞նչ նպատակ է ընդգրկել Երեւանի Պետական Կոնսերւատորիան:

— Երաժշտութիւնը ժողովրդի, մասսայի համար: Ահա նորագոյն Կոնսերւատորիայի գրօշակի լօզունգը: Այդ ուղիով էլ այսօր Կոնսերւատորիան մշակում է երաժշտութիւնը և օրից օր մօտենում ժողովրդին ու նրանից էլ քաղում իր կենդանութեան նիւթերը:

Ինչ է ցոյց տալիս սակայն մեզ Կոնստնտնուպոլիսի չորս տարւայ բեղմնաւոր եւ անդուլ գործունէութեան պատմութիւնը: Այդ կարճ, բայց նշանակալից չորս ամեակում արեւստի տաճարը ձգտել է ծառայել Հայաստանի աշխատաւոր մասսաների երաժշտական կուլտուրայի ձեւակերպմանը: Միանաւանդ նշանակալից է այն հանգամանքը, որ այսօր Կոնստնտնուպոլիսում պատրաստուած է մի երիտասարդ սերունդ, որը ներշնչւելով եւրոպական եւ արեւելեան երաժշտութեան առաջնակարգ ստեղծագործութիւններով՝ ձգտում է դառնալ հայ կեանքում մի նոր երաժշտական-կուլտուրական ոյժ: Վերջապէս Կոնստնտնուպոլիսի հանդիսանում է արեւստի այն հնոցը, որի միջոցով երաժշտական արեւստն աստիճանաբար թափանցում է հայ ժողովրդի ընդարձակ խաւերում եւ այդպիսով առաջ է գալիս երաժշտանէր մի հասարակութիւն, որի համար երաժշտութեան պահանջը գնալով աւելի ու աւելի զգալի է դառնում:

Ահա պատմական այն դերը, որ կատարել է կատարում է Երեւանի Պետական Կոնստնտնուպոլիսի հայ գեղարեւստի աշխարհում:

Թէ՛ երբ, եւ՛ մեծ ձեռքով է ինչպիսի՛ հանգամանքներում սկիզբ է առել Երեւանի Պետական Կոնստնտնուպոլիսի, ի՛նչ ծրագրերն է ընդգրկել իր չորսամսայ գործունէութեան ընթացքում եւ վերջապէս ի՛նչ նշանակալից նաճումներ է արել հայ երաժշտութեան ֆրոնտում, դրանց պատասխանը մենք կը տեսնենք նրա չորսամսայ պատմութեան մէջ:

II.

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏ. ԿՕՆՍՏԱՆՒՍՏՈՒՍՅԵՒ ՊԱՏՄԱՆԵՐԶԱՆՆԵՐԸ

Չորսամսայ պատմութիւն ունի Երեւանի Պետական Կոնստնտնուպոլիսի, Այդ պատմութիւնը կարելի է ընդգծել երեք տարբեր շրջաններով: Միեւն կանգ կ'առնենք այդ գլխաւոր պատմաշրջանների վրայ, որոնց մէջ ցոլանում է Կոնստնտնուպոլիսի գեղարեւստական-կուլտուրական կեանքի ամբողջ պատմութիւնը:

Ա. Շրջան, 1921 – 1923 Թւականը

Ո՞ր Թւականն է ընդգրկում Երեւանի Պետական Ստուդիայի ուսումնական առաջին շրջանը: 1921–1923 Թւականը, Դա մեծ յեղափոխութիւնների եւ կուլտուրական – տնտեսական տեղաշարժի աշխատանքի սննախընթաց մի հզօր շրջան է: Այդ ժամանակաշրջանում է, որ Խորհրդային Հայաստանի պրոլետարական երկաթէ մասսան կերտում է իր գերիշխանութիւնը եւ առաջնակարգ նաճումներ անում, թէ՛ տնտեսական եւ թէ՛ կուլտուրական ֆրոնտներում, Եւ ահա վերածնունդի տնայնի պատմաշրջանում սկիզբ է առնում Խորհրդային Հայաստանի ամենաապալկ երաժշտանոցը: Ո՞վքեր են հանդիսանում արեւստի հոյակապ այդ տաճարի կառուցանողները, նրա հիմնադիրները, Հայաստանի Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիտար (Լուսժողով) եւ բանասէր-պատմաբան Արտ. Յովհաննիսեանը, 1921 Դեկտեմ. 22ին, Կովկասից Երեւան է հրաւիրում երաժշտագէտ Ռոմանոս Միխիլեանին եւ երաժշտուհի Արտ. Բարսիլեանի ու յանձնարարում է նրանց կազմել երաժշտանոց, վերապահելով անունն ըստ տեխնիկական յարմարութիւնների:

Ռոմանուս Մեյրքեանն, իր ընկերների հետ ամենադժարին պայմաններում, Նայիրեան երկրի հարազատ հողի վրայ, կառուցանում է և կերտում երաժշտական արեւստի տաճարը:

Հայաստանում դարագլուխ կազմող կուլտուրական խոշոր մի երևոյթ է դա, որ առանձնապէս պիտի արձանագրել հայ արեւստի նորագոյն պատմութեան մէջ:

Առաջին շրջանում երաժշտանոցը կոչւում է Ստուդիա, որովհետեւ կատարում է նախապատրաստական աշխատանքներ, յետագայում կազմուելիք կոնսերւատօրիայի համար:

Երկու տարայ պատմական կեանք ունի առաջին շրջանը: Այդ պատճառը ջանք ոչ միայն Ստուդիայի ծագման, նախապատրաստութեան, այլ և նրա աստիճանական զարգացման, առաջադիմութեան շրջանն է կազմում: Այդ կարճ ժամանակամիջոցում Ստուդիան, հակառակ տիրող խիստ աննպաստ հանգամանքներին՝ ապրում է հարուստ և բեղմնաւոր մի շրջան: Դեռ աւելին՝ Ստուդիան որոշում է և ընդգծում թէ՛ սկզբունքային ու ծրագրային և թէ՛ պրակտիկ աշխատանքների ուղին, յարմարելով խորհրդային ընդհանուր շինարարութեան ոգուն և տեմպին:

Առկայն ինչպիսի նպատակ է ընդգրկում Ստուդիան իր ստեղծագործական աշխատանքի հէնց սկզբնական շրջանում: Ահա կենսական մի հարց, որը բոլորում է հէնց երաժշտանոցի պատմութիւնից: Ամենաառաջին հերթին Ստուդիան իրեն նպատակ է դնում մասնաշաղկապանցնել հայ երաժշտութիւնը, ազնւացնել նրա գեղարեւոտական արժէքները, որոնք և յայտնաբերել նրա ինքնուրոյն ոգին և ոճը, հիմք ունենալով բուն ժողովրդական ստեղծագործութիւնները: Ահա այն կէտ — նպատակը, որ ընդգրկում է Ստուդիան: Այդ ուղիով էլ Ստուդիան մի կողմից երոպական երաժշտութեան պատմա — կուլտուրական արժէքներով դաստիարակում է իր սաներին, որպէս զի նրանց միջոցով կարողանայ Հայաստանի համար հարազատ երաժշտական նոր արժէքներ յայտնաբերել, միւս կողմից էլ մօտեցնում է նրանց մեր երկրի անմիջական կարիքներին ու պահանջներին:

Ինչ պատկեր է ներկայացնում սակայն Ստուդիան իր ներքին՝ ուսումնական ծրագրով: Ստուդիան իր ուսումնական ծրագրով պատկերացնում է մի արհեստանոց, իր ակադեմիական և հանրակրթական բաժիններով: Ակադեմիկ բաժնում պատրաստւում են որակեալ մասնագէտներ, ակադեմիկ աշխատանքների համար: Այնտեղ աւանդում են գլխաւորապէս մասնագիտական առարկաներ — դաշնամուր, ջութակ, ձայնի մշակում, երաժշտութեան թէօրիա, իսկ հանրակրթական բաժնում պատրաստւում են լայն մասսաների (դպրոցական և արտադպրոցական) համար ժողովրդական երաժիշտ — ուսուցիչներ: Դասաւանդում են ջութակ, սիթի, երաժշտութիւն, սուֆլէթօ, էնցիկլոպեդիա, ղեկավարիկա, մէթօդիկա և էստէտիկա:

Առկայն Ստուդիայի գերը զբաղում էր սահմանափակում: Որպէս զի Ստուդիան կարողանայ իր աշխատանքների մէջ դրական հետեւանքների հատնել՝ ամենաառաջին ուշադրութիւն է դարձնում սաների էստետիկ երաժշտական ուսումնասիրութիւններին: Այլ և աշխատում է ուսնանալ երաժշտական — կուլտուրական այն մեծ արժէքներով, որ դարերի ընթացքում ստացել է համայն մարդկութիւնը: Եւ հենց այդ նպատակով էլ Ստուդիայի ծրագրի ունկնդրութեան դասերում առանձին տեղ են զբաղում համաշխարհային երաժշտական տիտանները (17—20 դար), ինչպէս Բախ, Մոցարտ, Լուչիլօ վան Բեթհովեն (Գերմանական կլասիկներից), Ֆրիդերիխ Շոպէն (Լեհական շէօլա), Հենտել, Գլուկ, որոնց յատկացրւում են յատուկ երաժշտական երկոններ, ուր ուսումնասիրւում են նրանց կենսագրութիւնները, ոճերի առանձնայատկութիւնները և այլն: Իսկ երբ Ստուդիայում վերջնականապէս մշակ-

ւում են ունկնդրութեան դասերը՝ իբրև Ստուգիական աշխատանքներ՝ հրապարակ են հանում մասսաների առաջ պատմական հոմերոցներ անունով և Բացի դրանից՝ կազմակերպում են նաև մի շարք գիտական դասախոսութիւններ:

Այժմ կանգ առնենք կենտրոնական մի այլ հարցի վրայ, ինչպէս է մտնում Ստուգիան մասսաների կարիքներին: Այս կենսական հարցը պարզում են հենց այն նիւթերը, որոնք ունենց մեր ձեռքի տակ: Նախ՝ Ստուգիան ուսանողների միջոցով կազմակերպում է դպրոցական երգեցողութեան փորձական դասեր, աշխատաւորական դպրոցներում երգեցողութեան արւեստն ազնւացնելու և բարձրացնելու նպատակով: Յետոյ՝ ուսանողութեան մի մասը 1923 թիւ ամառայ ընթացքում ցրում է Լոռի, Բամբակ, Գեղարքունիք, Ջանգեզուր, Շիրակ, և փորձեր է անում հաւաքելու հայ ժողովրդական երգերն ու հէքիաթները և միաժամանակ տեղական ուսուցիչներին համար կազմակերպում է փորձական դասեր և մանկական համերգներ: Այդ ուղիով մի կողմից ուսանողների մէջ սէր է զարթեցնում դէպի ժողովրդական երգը և միւս կողմից նրանց վարժեցնում է հասարակական, մասսայական աշխատանքներին:

Այս է հաւաքականութիւնը գծերով Երեւանի Պետ. Ստուգիայի ամենաառաջին շրջանի պատմութիւնը: Անցնենք երկրորդ պատմաշրջանին:

Բ. Շրջան, 1923 – 24 Թւականը

1923–24 ուսումնական տարին Երեւանի Պետ. Ստուգիայի ոսկեշրջանն է կազմում:


1923 թիւ աշխատանքները հաւատք են ներշնչում, որ առանց դժուարութեան երաժշտանոցը կարող է վերածւել Կոնսերւատորիայի: Այդ ուղղութեամբ Երեւանի Լուսաւորութեան Կոմիտարիատը հսկայական զոհողութիւններ է անում. նա առաջին հերթին բարձրացնում է Ստուգիայի սեմետան 10–15 անգամ, վերանորոգում է շէնքը, բաց է անում երաժշտական նոր դասարաններ, հրաւիրում է նոր և թարմ ուժեր և մուծում երաժշտանոցի բոլոր երաժշտական գործիչները: Իւ հաւաքական ուսումնական տարում երաժշտական Ստուգիան վերածւում է Կոնսերւատորիայի, որ պաշտօնապէս բացւում է 1923 հոկտեմբեր 1ին: Դա Խորհրդային Հայաստանի գեղարւեստական խոշոր և առաջնակարգ նաճուճներից մէկն է: Այնուհետեւ Կոնսերւատորիան թեւակոխում է մի նոր և բացառիկ շրջան:

Նոյն տարեշրջանում, հոկտեմբեր 1ից մինչ նոյեմբերի վերջը, դիմումներ են անում և ըննութիւն տալիս 792 հոգի, որից ընդունւում են միայն 184 հոգի, 79ը արական և 105ը իգական: Սրանց մէջ մտնում են արհեստակցական միութեան անդամներ, կարմիր բանակայիներ, պետական ծառայողներ, արհեստաւորներ և գիւղացու զաւակներ:

Իր ներքին կազմութեամբ Կոնսերւատորիան բաց է անում երկու զլխաւոր բաժին. — Ա. Տեխնիկական, որ իրեն նպատակ է դնում միջին երաժիշտաշխատաւորներ պատրաստել և Բ. Ակադեմիական, որ նախապատրաստում է որակեալ արտիստներ: Դասաւանդում են. տեսութիւն (տարրական, հարմոնիա և կոմպոզիցիա), վոկալ արւեստ, յաշնամուր, լարաւոր (ջութակ, վիպլոն, կոնտրաբաս), փողաւոր (տրամբոն, տրոմբոն, ֆլէյտա, կլարնետ, օրգ), խմբական երգեցողութիւն, սոլֆեջիօ, ռիթմիկա, մանկավարժութիւն, ունկնդրութեան դաս: Այդ առարկաներն աւանդում են 1) երաժիշտ-մանկավարժներ, որոնց մէջ մտնում են. Արուս Բարալեան (վոկալ արւեստ), տիկ. Աննա Մնացականեան և Յովսէփ Սա-

դաթեան (զաշնամուր), Աւետիգ Գարրիէլեան (Չութակ), Ռոմանոս Մելիքեան և Դաւիթ Սողոմոնեան (երաժշտութեան թէօրիա):

Արմատական բնէ նաճումներ է անում Կոնստնտնուպոլիսն այս շրջանում: Իրը և արգասիք և օրգանական աշխատանքների սինթեզ երաժշտական Ստուդիայի՝ Կոնստնտնուպոլիսն արձագանգում է Խորհրդային շինարարութեան և միաժամանակ անխախտ մնալով իր հիմնական լօզունգին, այն է՝ դէպի մասսան, նոյն սեզօնում իր ուսանողները գիւղի և քաղաքի մասսաների մէջ է ուղարկում և խթան հանդիսանում նրա էստետիք դաստիարակութեանը: Նոյնպէս նոյն շրջանում Երևանի և մօտակայ շրջանների հայ, ռուս, թուրք և եզիզ դպրոցների համար տալիս է երգեցողութեան ուսուցիչներ: Եւ եթէ այսօր աշխատանքի զարդոցներում կան փոքր



Երևանի Պետական Կոնսերւատորիան
(արտադրութիւնն արգելւած է)

ի շատէ աչքի ընկնող երգեցողութեան ուսուցիչներ, դրանք նախկին Ստուդիայի և այժմեան Կոնսերւատորիայի սաներն են:

Նշանակալից է և այն երեւթիքը, որ իր ներքին աշխատանքներից դուրս՝ Կոնսերւատորիան ակտիւ մասնակցութիւն է ցոյց տալիս պետական — հասարակական տօներին, ինչպէս Կարմիր Բանակի տարեգարծին, Յակոբ Յակոբեանի յօրհանին, Հայկական Կարմիր Բանակի և Հոկտեմբերեան յեղափոխութեան տարեգարծին, Լենինի Սգահանդիսին, Անապաստան երեխաների շարաթին, մայիս 1ի տօնին և այլն:

Թէ Կոնսերւատորիան, բացի անմիջական մասսայական գործունէութիւնից՝ ինչպէս է հրապարակ հանում իր այն նաճումները, որ իրագործում է ակադեմիական աշխատանքների ընթացքում, դա ցոյց է տալիս մեզ իր տարեկան ցուցահանդիսի ծրագիրը, որի պատկերն առաջ ենք բերում իրեն. թանկագին մի գոկումենտ.

Հ. Ս. Խ. Հ.

Կոնսերվատորիա 1924 թ. Յունիսի 17ին Ալկադեմիական տարւայ
Երաժշտական Յուցամանդէս

ԾՐԱԴԻՐ

Դաշնամուր

I.

1. Բախ. Կոնցերտ-երկու դաշնամուրի (G-dur) աշ. Խանգաղեան Նոտաշիւս. աշ. Հախնազարեան Հրաշխայ.
2. Բեթհովեն. սոնատ, օպ. Յ1⁰ 2 (d-moll) Մենդելսոն. երեք երգ. Լ. Խիւդ (b-moll). աշ. Մուսիկեան Նիկա.
3. Լիստֆ. Կոնցերտ — Es-dur. աշ. Մարգարեան Սիրանոյշ.

Արհիւնաւոր

4. Մենդելսոն. Մեւրդիա (Զուժակ). — Մեւրդեան. Սեւ Կարաւիկ. աշ. Թա. դեռնեան Մկրտիկ.
5. Վիտտի. Կոնցերտ — N^o 22 (Զուժակ). աշ. Արարեան Մուշեղ.
6. Գրաւերման. Նովտիրն (Վիօլոնչել). աշ. Անանեան Կորիւն.
7. Կրեցցեր. Կոնցերտ N^o 19 (Զուժակ). աշ. Մարտիրոսեան Լեւոն.

Փողաւոր

II.

8. Շպերլինգ. Փանդազիա (տրամբէդ). աշ. Տ. Դուրեան Մամիկոն.
9. Ռեմիւզա. Բօլերօ (Ֆլէյտա). աշ. Ազատեան Արշաիր.
10. Շպերլինգ. Կապատինա (տրամբօն). աշ. Շիխով Բորիս.
11. Վերդի. օպ. Սիմօն Բոկկանչերա, «A te l'estremo addio». աշ. Սամե. չեան Վարդան.
12. Դոնիցետտի. օպ. Լուկրէցիա Բօրչիա, «Oh, sian così».
- Գօժէս. օպ. Սալվատօր Ռօզա, «Mia piccinella». աշ. Հախնազարեան Մարիամ.
13. Ռօսսինի. օպ. Սիմօնիօրա, «Ah, quel giorno».
- Տօմա. օպ. Համլէտ Օֆէլիայի Բալլադը. աշ. Մ. Շահնազարեան Թամար.

Անամբլ

14. Բեթհովեն. Տրիօ (G-moll) Ա. մաս, Զուժակ, Վիօլոնչել և դաշնամուր. աշ. Տ. Մարտիրոսեան Լեւոն, աշ. Անանեան Կորիւն, աշ. Տ. Մարտիրոսեան Լեւոն.
15. Հայդըն. Քվարտետ (G-dur) Ա. մաս, երկու Զուժակ, ալտ և վիօլոնչել. աշ. Կիրակոսեան Յարութիւն, աշ. Վարդանեան Արմեն, աշ. Տ. Մարտիրոսեան Լեւոն, աշ. Անանեան Կորիւն.

1924 թ.ի ուսումնական տարեշրջանի վերջում Կոնսերվատորիայի վերատեւսող Ռոմանոս Մեւրդեանն իր հիւանդութեան պատճառով դիմում է Լուսաւորու. Թեան Կօմիսարիատին և խնդրում է ազատել իրեն վարչական աշխատանքից, Կօմիսարիատն ընդունում է նրա խնդրը:

Նոյն թիւ նոյեմբերին, սահմանափակ շրջանում, տօնում է կօնսերատորիայի հիմնադրութեան երրորդ տարեգարձը։ Այդ առիթով ուսանողութիւնը նւիրում է է Ռոմ։ Մեկիքեանին իւր լուսանկարը (նկարած նկարիչ Մարտիրոս Սարեանի վրձինով), որը Լուսաւորութեան կօմիսարիատի որոշումով կախում է երաժշտա- նոցում, իրրեւ հիմնադրի։

Գ. Երջան, 1924—մինչեւ օրս

1924 թականի վերջում երեւանի Պետական կօնսերատորիան թեւակոխում է մի նոր և ուշագրաւ շրջան, Գեղարւեստի տաճարին վարիչ է նշանակում երաժշտագէտ Արշակ Աղամեանը, որի նախաձեռնութեամբ երաժշտանոցն ենթարկ- ւում է կազմակերպչական նոր փոփոխութիւններին։

Որո՞նք են այդ նոր նաճումները։ Աղամեանն անցնելով պաշտօնի՝ ամենա- առաջին հերթին հրաւիրում է թիֆլիզից նոր երաժշտագէտ ոյժեր՝ Յովհաննէս Յովհաննէսեան, Սպիրիդոն Մեկիքեան, Ովսաննա Տէր—Գրիգորեան, Գուրգէն Միր- զոյեան, Միքայէլ Միրզոյեան և այդպիսով դասաւանդութեան զործը դնում է աւելի առողջ և զործնական հիմքերի վրայ։ Այնուհետեւ նկատի առնելով կօնսեր- ատորիայի նոր կանոնադրութիւն մշակելու անհրաժեշտութիւնը, Աղամեանը ժա- մանակակից կեանքի երաժշտական պահանջների համապատասխան կազմում է մի նախագիծ։ Գլխաւորապէս նա ընդգրկում է այն տիպն ու ծրագիրը, որ մշակած է Մոսկւայում և ընդունած Խորհրդային Միութեան բոլոր կօնսերատորիաներում։ Այդ ծրագրի առաջաբանում Աղամեան այնպէս է բնորոշում կօնսերատորիայի կէտ—նպատակը․

« Կօնսերատորիայի նպատակն է պատրաստել երաժիշտներ, որոնք քե՛ հայրազան Երաժշտութեան տեխնիկան ու բեօրիան են իւրացնում և քե՛ հիմնովին ձանաչում իրենց մայրենի երաժշտութիւնը։ Կօնսերատորիայի աշակերտութիւնն իր սոցիալական դրո- քեամբ պիտի պատկանի բանօրական—գիտացիական ու պրօֆեսիօնալ ժաւայտների ընտանիքներին։ Կօնսերատորիան յիենելով մեր երկրի երաժշտական կոյտութայի կենտրոնը, պետք է կապի բնակչութեան շայն խաւերի հետ և տանի երանց մէջ երաժշտական—կրթական աշխատանք։ Այն գիտակցութեամբ, որ կօնսերատորիան մեր երաժշտական կոյտութայի աւանգարդն է. քե՛ իր պատերի մէջ և քե՛ դրանմ պետք է կսի մէկ հին հատիկը նախապաշարումների դէմ ու հաստատի երաժշտութեան անե- լիքների նոր ըմբռնողութիւն »։

Մրազրի էութեան համաձայն կօնսերատորիայի զասընթացքն ստորաբաժան- ւում է երեք աստիճանի. — առաջին աստիճան, երեք տարւայ դասընթացքով, երկրորդ աստիճան կամ տեխնիկում, չորս տարւայ դասընթացքով և երրորդ աստիճան կամ բարձրագոյն ուսումնական հիմնարկ (վուզ), երկու տարւայ դասընթացքով։ Ընդունելով յիշեալ ստորաբաժանութիւններ կօնսերատորիան համարում է իրեն երաժշտական բարձրագոյն ուսումնական հիմնարկութիւն։

Այնուհետեւ կօնսերատորիայի վարչութիւնն իւր կատարելիք դերի նկատմամբ առաջնորդում է իրիստ պահանջներով։ Աչքի առաջ ունենալով այն կարեւոր հանգամանքը, որ կօնսերատորիայում պատրաստւում են մասնագէտներ և ո՛չ թէ սիրողներ, ուսանողների համար ընդգծում է տարիքի որոշ սահման, որի համաձայն

14 տարեկանից վեր հասակ ունեցող սկսնակ ուսանողները չի ընդունում նւագարանական դասարաններում, բայց փոքաւոր գործիքներից և ձայնից, որտեղ տարիքը չի սահմանափակուում:

Կոնսերւատորիան նոր հիմունքներով վերակազմելիս ընդգրկում է մի այլ լոզունգ, այն է — չքաւոր դասին պատկանող ուսանողներից ընդունել անխտիր բոլոր արժէքատուներին, իսկ ունեւոր դասից՝ միմիայն խիստ աչքի ընկնողներին: Հէնց այդ նպատակով էլ 1924 հոստով. տարւայ սկզբին ուսանողութիւնը զտման է ենթարկուում թէ՛ սոցիալական դրութեան և թէ՛ ակադեմիական պատրաստութեան տեսակէտից: Նոյն թւի հոկտեմբերին քննութիւն են տալիս և դիմումներ անում 600 հոգի, որից ընդունուում են միայն 100 հոգի: Ներկայումս ուսանողների թիւն է 224, որոնց բացարձակ մեծամասնութիւնը արհեստակցական միութեան անդամներ և զւղղացիների զաւակներ են:

Սկայն Կոնսերւատորիայի ամենաուշագրաւ երեւոյթը կոյանքում է նրանում, որ էստէտիքական երաժշտութեան իդիօլոգիական նպատակների համար ընդգրկում է ժողովրդական երաժշտութեան սարերը, ութմը, եղանակի չափը, օրգանապէս ձուլւած եւրոպական երաժշտութեան արտայայտութեան միջոցներ — պոլիֆօնիայի, հարմոնիայի և դիսոնիայի հետ: Այդ նպատակին հասնելու համար Կոնսերւատորիայի վարչութիւնը պահանջում է ուսանողներից, որ կատարելապէս տիրապետեն մի կողմից եւրոպական երաժշտութեան թէօրիային ու տեխնիկային, միւս կողմից հիմնաւորապէս ուսումնասիրեն ու իւրացնեն ժողովրդական երաժշտութեան հիմնական տարրերը: Հէնց այդ ուղիով էլ կազմւած է Կոնսերւատորիայի դասայցուցակը, որ իր բովանդակութեամբ բաժանւում է մի քանի գլխաւոր խմբակների:

1. Երգեցիկ խումբ. — Կոնսերւատորիայի երաժշտական — կրթական գործում որոշ տեղ է զբաւում խմբական երգեցողութիւնը, որն իր դասաւանդութեան մեթոտով միանգամայն յարմարւում է ժամանակակից կենսիցի ոգուն և երաժշտական պահանջներին: Խմբական երգեցողութեան կուլտուրան առաջ է տարւում ակադեմիկ պարապմունքի սխտեմով: Բացի խմբից Կոնսերւատորիայում կան երգ սովորողներ և ձայն մշակողներ, ընդամենը 27 հոգի, որի 18ը իգական է և 9ը արական:

2. Նւագախումբ և սիմֆօնիկ օրկեստր, — Կոնսերւատորիայի այս շրջանի ամենախոշոր նւանդներից մէկը նւագախումբն ու սիմֆօնիկ օրկեստրն է, որի սկզբնաւորութիւնը Հայաստանում դարազույս կազմող մի երեւոյթ է և միաժամանակ ապագայում արեւելեան երաժշտութեան մէջ մեծ յեղափոխութիւն առաջացնող մի ֆակտոր: Օրկեստրն իրեն նպատակ է դնում նւագախմբի համար երաժշտանք պատրաստել և միաժամանակ երաժշտական հանձարների ստեղծագործութիւնները Հայաստանում հնչեցնել: Ծրագրի էութեան համաձայն ուսանողներից պահանջւում է տիրապետել գործիքներին ամենալայն չափով:

Օրկեստրի խումբը բաղկացած է 40 հոգուց, որի ղեկավարն է երաժշտագետ Սիւրշակ Աղամեան, իսկ նւագախմբում գործիքներ սովորողները ներկայացնում են հետեւեալ պատկերը.

72 հոգի դաշնակ սովորողներ

54 » ջութակ »

18 » վիօլօնչել »

24 » փողային գործիքներ սովորողներ:

Այստեղ ընդգծենք և այն հանգամանքը, որ Կոնսերւատորիայի ուսանողութեան խոշոր տոկոսը պատկանելով չքաւոր դասակարգին, չունի անհրաժեշտ ձեռնարկներն

ու գործիքները, Կոնստընտուօրիայի վարչութիւնն ընդառաջ գնալով այդ պահանջին՝ հնարաւոր չափով փառք է բերում երաժշտական գործիքներ, նօթաներ և ձրիարար սովորեցնում աշակերտներին: Ոչոք տեսակէտից լայն աշակցութիւն է ցոյց տալիս Մոսկուայի Երաժշտական Կազմակերպութիւնը, ուղարկելով Խօթք ժան Խաչիկ երաժշտական գործիքներ — ջութակներ, չելլօ, կոնտրապապա և նօթաներ:

Յ. Ունկերովան դասեր, — Կոնստընտուօրիայի ուսումնական ծրագրում կենտրոնական տեղ են բռնում նախ երաժշտական ունկերգծման դասերը, որոնք մեծ զարկ են տալիս աշակերտների երաժշտական կրթութեան զործին: Դա հակապատկերն է հին, բուրժուական երաժշտական շփոթի, ուր ամբողջ դասականութիւնն անցնում էր լուկ երգելով և այդպիսով յղեցնելով ու ատելութիւն առաջացնում ղէպի երգն ու երաժշտութիւնը:

Նորագոյն Կոնստընտուօրիայի ունկերգում դասերում աշակերտները մտքերի փոխանակութեամբ և քննադատական վերլուծութիւններով ծանօթանում են երաժշտական զանազան տիպի ստեղծագործութիւնների հետ և միաժամանակ սովորում են լսել և հասկանալ երաժշտութիւնը: Ոչոքիսով նրանք զարգացնում են իրենց մէջ երաժշտական — քննադատական կարողութիւնը:

Գ. Մանկավարժական դասընթացներ. — Լուրջ ուշադրութեան արժանի է նաեւ Կոնստընտուօրիայի կից յատուկ ծրագրով բացւած երաժշտական — մանկա-վարժական դասընթացը, ուր պատրաստում են 25 երաժիշտ — մանկավարժներ, նախնական դպրոցներում խմբական երաժշտութիւնը վարելու համար:

Նշանակալից է այն, որ մանկավարժ — ուսուցիչներն ամառայն ընթացքում կատարում են մի շարք երաժշտական էքսկուրսիաներ ղէպի գիւղերը, ուր թէ՛ ժողովրդական երաժշտութիւնն են ուսումնասիրում և թէ՛ գիւղական երեխաներից երգելի խմբեր կազմելով՝ զանազան մատչելի և օրինակելի համերգներ են կազմակերպում: Ոչոքիսով գիւղացիներին ծանօթացնում են երաժշտական զանազան տիպի ստեղծագործութիւնների հետ:

Անցնելով ուշադրութեան՝ պէտք է արձանագրենք այն ուրախալի երեւոյթը, որ ծրագրից միանգամայն դուրս են ձգւած հին, սխօլաստիկ և շովինիստական թթու շարուն երգերը, որոնց միութարինում են մանկական, ժողովրդական, աշխատանքի և ժամանակակից յեղափոխական ոգով զբաւած երգերը:

Ծ. Համերգներ. — Կոնստընտուօրիայի վարչութիւնն այս տարւանից լուրջ ուշադրութիւն է դարձնում Հայաստանի աշխատաւոր մասսաների երաժշտական կուլտուրայի զարգացման վրայ. նա իր ոյժերով ամէն երկու շաբաթը մի անգամ կազմակերպում է համերգներ, երաժշտական բարդ ծրագրով, որի մէջ մտցնում է նաև խօսք նւիրած երաժշտական հանճարներին ու տաղանդներին: Գիկտեմբեր 10-ից մինչև մարտի 4-ը կազմակերպել է Խօթք և Խօթք (Խմբական) շաբաթը նւիրում է կոմպօզիտոր Ալեքսանդր Սպենդիարեանի ստեղծագործութիւններին: Համերգի անմիջական ղեկավարութիւնը յանձնում է իրեն՝ կոմպօզիտորին, որ ծանօթացնում է հանդիսականներին իր երկու բնորոշ գծերի — մեներգների և նազա-խմբային ստեղծագործութիւնների հետ: Մեներգներում Սպենդիարեանը հանդէս է գալիս իր տաղանդի ամբողջ թափով: Առհասարակ Կոնստընտուօրիայի առաջին համերգը մեծ յաջողութիւն է ունենում: Երկրորդ համերգը նւիրում է Բեթհովենին, երրորդը՝ Մոցարտին, չորրորդը՝ Շումանին, հինգերորդը՝ Շոպենին և վեցերորդը՝ Գրիգորի (Մուրվեղիացի կոմպօզիտոր): Բացի այդ համերգներից՝ Կոնստընտուօրիան իր ոյժերը, երկու շաբաթը մի անգամ, ձրիարար յատկացնում է պրոֆ — միութեան անդամներին, յատուկ մատչելի ծրագրով: Նոյնպէս իր պատերի մէջ, շաբաթը մի

անգամ, իր մանկավարժ — ուսուցիչներով կազմակերպում է համերգներ՝ զուտ աշակերտութեան համար:

6. Ուսուցչական կազմը. — Կոնսերվատորիայի ուսուցչական կազմը, որ բաղկացած է 22 հոգուց, ներկայացնում է հետևեալ պատկերը. Աննա Միսացա-կանեան, Էւգենէ Խանկալամեան, Մարիամ Բարաջանեան, Յովսէփ Մազաթեան (դաշնակահարներ), Յովհաննէս Յովհաննիսեան, Դաւիթ Սողոմոնեան, Անդրէ Կոտ-լիսարեան (շուքակահարներ), Արտեմ Ալվազեան (վիոլոնչելի ուսուցիչ), Ըշպելլինկ (գերմանացի, փողային գործիչների մանկավարժ), Արուս Բարաթեան և Միքայէլ Մելիքսէթեան (ձայն մշակելու), Շողակաթ Կոթլերեան (օժանդակ դաշնամուրի երգիչների մանկավարժ), Ովսաննա Տէր-Գրիգորեան (ներդաշնակութեան և ունկն-դրութեան ուսուցչուհի), Սպիրիդոն Մելիքեան (լսողութեան մշակման՝ սովֆեչիօ ուսուցիչ), Ռոմանոս Մելիքեան (երաժշտութեան թէօրիայի), Միքայէլ Միրզոյեան (խմբերգի), Արշակ Աղամեան (երաժշտութեան փիլիսոփայութեան և սիմֆոնիկ օրկէստրի ուսուցիչ):

Այժմ խտացնենք մեր մտքերը: Քսաներորդ դարի խորհրդային Հայաստանի աշխատակութեան կուլտուրական մեծ և առաջնակարգ նւաճումներից մէկն է հանդիսանում Երևանի Պետական Կոնսերվատորիան, որը դարձել է արդէն երաժշ-տական մի խոշոր և կարևոր կենտրոն:

Գեղարեստի այդ տաճարն իր այժմեան ծրագրով համապատասխանում է ոչ միայն ժամանակի ոգուն և պահանջներին, այլ և հանդիսանալով յեղափոխական մասսայի նւաճումներից մէկը. կուլտուրական ասպարիզում ձգտում է այդ մաս-սային իրար հետ շաղկապող օղակներից մէկը լինել: Հէնց այդ նպատակով էլ կազմակերպում է որոշ սրտեմատիզացիայի ենթարկւած ծրագրով երաժշտական համերգներ: Այդպիսով ժողովրդի լայն խաւերն աւելի մօտիկ է կանգնեցնում ու ծանոթացնում հայ և համաշխարհային երաժշտական արեստի մաքուր և ազնւացրած նմուշների հետ: Այդոք էլ կայանում է Կոնսերվատորիայի իրիօրօգրական հիմունքը:

Ճիշդ է, որ երաժշտական — գեղարեստական ընագաւառում Կոնսերվատորիան զեռ շատ նւաճումներ ունի անկիւր, բայց այն ինչ նա արել է, ինչ նա ստեղծել է և կառուցել իր չորս ամեայ երաժշտական անդուլ աշխատանքի պատմաշրջա-նում, արժանի է ամենայն ուշադրութեան և անկեղծ գնահատութեան:

17 Մարտ 1925, Երևան.

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ

ՄԵԾԻՆ ՄԻԺԱՐԱՅ ՏԱՐԵԴԱՐՁ

Ս. ՂԱԶԱՐՈՒՄԻ ՄԷՋ

◁ ○ ▷

Հիմնադրիս մահուան 176րդ տարեգարձը մեծ շուքով տեղի ունեցաւ կղզեկիս մէջ Ապրիլ 26ին:

Աշխարհամատրան կիրակիի Հանդիսաւոր պա-տարագէն վերջ՝ հրաւիրեալք հաւաքուեցան Մե-նաստանիս չքնաղ Մատենադարանը, չոն՝ ձեռա-գրատան խորը գտնուող Լուսանորոգն Մխի-թարայ կիսանդրին կը բարձրանար հիանալի

զունագեղ ծաղկներու բլուրի մը մէջէն. կարծես արեւ մ'էր կ'իւլէր բազմերգիան արշալոյսի մը ծոցէն: Բայց այդ գեղատեսիլ ծաղկները կը թուէին ունենալ իրենց մէջ քաղցր խորհուրդներ մը, վսեմ իմաստներ մը. անոնք բազմաթիւ թաղարներու մէջ իրենց բովանդակ գեղովն ու թարմութեամբ կը ներկայանային. անոնք Մխի-թարայ բոլորտիքը կը շարունակէին միւս կող-մանէ աճումը իրենց խորհրդագեղ կեանքին, որուն տպաւորութիւնը կրկնել կու տայ մեզ օրուան ճառախօս Հ. Սրապիոն Ռուչոնեանի սա բա-ռերը, թէ «Ամանացաւ Մխիթար յորդիս իւր.